

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ

ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության
ամբիոնի ասպիրանտ

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հիմնաբառեր. *համակարգային նշանակության բանկեր, տնտեսական կարգավորում, Բազել 3, մեծածախ ֆինանսավորման գործակից, ՀՀ բանկային համակարգ, համարժեքության նորմատիվ, համակարգային նշանակություն, ակտիվներ, շուկայի դիրք, իրացվելիություն, 3-րդ մակարդակի ակտիվներ, փոխկապվածություն*

Ֆինանսական համակարգի կայունությունը կարևոր խնդիր է ցանկացած տնտեսության համար: Ղա պայմանավորված է ֆինանսական՝ մասնավորապես բանկային համակարգի՝ որպես ֆինանսական միջնորդի դերով և անկայուն իրավիճակի դեպքում տնտեսական, սոցիալական բազմաթիվ հետևանքների առկայությամբ, որոնց վերացումը պահանջում է էական ֆինանսական միջոցներ և ջանքեր:

Արդեն 2007 թվականից սկսվող ֆինանսական ճգնաժամը վեր հանեց մի շարք խնդիրներ՝ խոչորագույն ֆինանսական հաստատությունների անվճարունակության հետ կապված. մասնավորապես՝ ճգնաժամի ընթացքում մի շարք խոշոր, համաշխարհային նշանակությամբ բանկերի սնանկացման դեպքերը լուրջ բացասական ազդեցություն ունեցան ինչպես համաշխարհային ֆինանսական, այնպես էլ տնտեսական ոլորտների վրա՝ շուկային ազդակներ հաղորդելով տնտեսության ֆինանսական և իրական հատվածներին: 2008 թվականի սեպտեմբերին ակտիվների մեծությամբ չորրորդ՝ ամերիկյան «Լեման Բրոդերս» ներդրումային բանկի սնանկացումը, ինչպես նաև «Մերիլ Լինչի» վաճառքը մրցակցին, անմիջապես հանգեցրին ամբողջ աշխարհում ֆինանսական շուկաների անկայունության, որի հետևանքով ճգնա-

Ժամի դեռ այս փուլում ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը և եվրոպական երկրների կենտրոնական բանկերը ստիպված եղան լրացուցիչ 170 մլրդ դոլարի միջոցներ ներարկել իրենց երկրների ֆինանսական համակարգեր, իսկ լոնդոնյան միջբանկային փոխառությունների դրույքը մեկ օրում աճեց 3.33 տոկոսային կետով¹:

Օրինակը ցույց է տալիս, որ նույնիսկ մեկ խոշոր և նշանակությամբ կարևոր բանկի սնանկացումը կարող է լուրջ բացասական հետևանքներ ունենալ ոչ միայն տեղական, այլև արտասահմանյան ֆինանսական շուկաների վրա, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է ուղղել զգալի ֆինանսական ռեսուրսներ: Կարևորն ու առաջնայինն այս համատեքստում ոչ թե ճգնաժամային իրավիճակի համապատասխան հետևանքների հաղթահարումն է, այլ այդպիսի վիճակների առաջացման հավանականության նվազեցումը, քանի որ, երբ խոշոր բանկը իրացվելիության խնդիրներ է ունենում, անմիջապես ֆինանսական լարվածություն է առաջանում շուկայի այլ մասնակիցների շրջանում:

Կարգավորման անհրաժեշտությունից ելնելով՝ հարկ է հստակեցնել ֆինանսական հաստատության՝ *համակարգային նշանակության* չափանիշները*:

«Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի» կողմից 2011 թ. նոյեմբերին հրապարակված «Գլոբալ համաշխարհային նշանակալի բանկեր. գնահատման մեթոդաբանություն և լրացուցիչ վնասների կլանման պահանջներ» խորհրդատվական բնույթ կրող փաստաթղթում սահմանվում են չափանիշները և կապիտալի նկատմամբ լրացուցիչ պահանջները: Բազելյան կոմիտեի միջազգային խոշոր առևտրային և ներդրումային բանկերի սնանկացման դեպքերը ակնհայտ դարձրին այն փաստը, որ սնանկացման հետևանքները կարող են տարածվել ֆինանսական հատվածի այլ մասնակիցների վրա, ինչը կանխելու գործում կարևոր է խոշորագույն առևտրային բանկերի հանդեպ կարգավորման այլ՝ ավելի խիստ նորմատիվների կիրառումը:

Համակարգային նշանակությամբ բանկերի տնտեսական կարգավորման առումով կարևոր են հետևյալ երկու խնդիրները. նախ՝ բացահայտել այն ֆինանսական հաստատությունները, որոնք ունեն համակարգային նշանակություն, և որոնց սնանկացումը հղի է լայնածավալ վնասներով, երկրորդ՝ սահմանել այդպիսի հաստատությունների տնտեսական կարգավորիչների մեծությունը:

Առաջին խնդրին անդրադարձ է եղել ինչպես բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի փաստաթղթերում, այնպես էլ ֆինանսական կայունության խորհրդի կողմից և Մեծ քսանյակի երկրների առաջնորդների՝ Սեուլում տեղի ունեցած գագաթնաժողովի ժամանակ²: Սեուլյան գագաթնաժողովում ազգային և միջազգային մակարդակներով ամրագրվել է Մեծ քսանյակի երկրների ղեկավարների պատրաստակամությունը՝ սահմանելու կարգավորման սկզբունքներ, որոնց միջոցով կկանխվի ֆինանսական հաստատությունների առաջատար լինելու ձգտումը, ինչպես նաև բանկային ծառայությունների շուկայի հատվածավորումը՝ բանկային կապիտալի և իրացվելիության նոր

¹ Տե՛ս „PEK Daily“, 17 սեպտեմբեր 2008:

* Համակարգային նշանակությամբ՝ «ֆինանսական հաստատություն» եզրույթը կիրառվում է Բազելյան կոմիտեի փաստաթղթերում: Դա չափեր է շփոթել «համակարգաստեղծ»-ի հետ:

² Տե՛ս The Seoul Summit Document, 2010:

չափանիշների որոշմամբ³: Այդ չափանիշները սահմանվեցին բազելյան կոմիտեի կողմից, որի ընդունած փաստաթղթերը թեև պարտադիր կիրառման ուժ չունեն, սակայն անդամ երկրների կենտրոնական բանկերը ծագում են կիրառել այդ նորմատիվ ակտերը: Էական է նաև այն փաստը, որ ֆինանսական հաստատությունների միջև փոխկապվածությունն առկա է ինչպես զուբալ մակարդակով՝ երկրների միջև, այնպես էլ ազգային բանկային համակարգի մակարդակով՝ առանձին տնտեսավարող սուբյեկտների միջև:

Համակարգային նշանակությամբ՝ հայաստանյան բանկի սնանկացումն ազդում է ինչպես ազգային ֆինանսական համակարգի մասնակիցների, այնպես էլ, ուղղակի կամ միջնորդավորված՝ այլ երկրների ֆինանսական համակարգերի վրա: Ըստ այդմ՝ տնտեսական կարգավորման տեսանկյունից կարևոր և արդիական է ՀՀ ֆինանսական հատվածի համար համակարգային նշանակությամբ բանկերի բացահայտումը, ինչպես նաև տնտեսական կարգավորման այլ՝ ավելի խիստ նորմատիվների սահմանման գնահատումը:

Բանկային հսկողության Բազելյան կոմիտեն բանկերի համակարգային նշանակության փաստի բացահայտման համար առաջարկում է օգտագործել որոշակի ցուցանիշների համակարգ, որն ընդգրկում է 5 խումբ՝ ըստ բանկային գործունեության ոլորտների հայտանիշի⁴: Այս ցուցանիշներն արտահայտում են բանկային գործունեության հիմնական ուղղությունները, ընդ որում՝ առավելապես այն ուղղությունները, որոնց միջոցով բանկային ռիսկերը կարող են փոխանցվել ֆինանսական համակարգի այլ մասնակիցների*։ Այնուամենայնիվ, բազելյան կոմիտեի առաջարկած ցուցանիշները ուղղակիորեն կիրառել ՀՀ բանկային համակարգի տնտեսական կարգավորման նպատակով, առանց հաշվի առնելու վերջինիս բանկային համակարգի առանձնահատկությունները, զարգացման պատմությունը, ակտիվների, պարտավորությունների և հետհաշվեկշռային հոդվածների կառուցվածքը, ինչպես նաև տնտեսական կարգավորման փորձը, չի կարելի: Դիտարկենք այդ ցուցանիշները ՀՀ բանկային համակարգի կարգավորման վերաբերմամբ՝ օգտակարության և կիրառելիության տեսանկյուններից:

1. Ցուցանիշների առաջին խումբը, որ բազելյան կոմիտեն առաջարկում է օգտագործել որպես համակարգային նշանակության ցուցանիշ, օտարերկրյա գործունեությունն է. ներառում է օտարերկրյա պահանջները և պարտավորությունները: Օտարերկրյա պահանջներն ընդգրկում են առևտրային բանկի արտասահմանյան մասնաճյուղի օտարերկրյա տնտեսությունում ցանկացած արժույթով տրամադրված վարկերը, տեղաբաշխված ավանդները և կատարված կանխավճարները: Բազելյան կոմիտեի մեթոդաբանությամբ՝ օտարերկրյա պարտավորությունները ներառում են ոչ ռեզիդենտների

³ Տե՛ս նույն տեղը:

⁴ Տե՛ս Global systemically important banks: assessment methodology and the additional loss absorbency requirement (rules text), Բազելյան կոմիտե, 2011 թ. նոյեմբեր:

*Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեն օգտագործում է հետևյալ ցուցանիշները՝ օտարերկրյա պահանջներ, օտարերկրյա պարտավորություններ, ընդամենը ակտիվներ և հետհաշվեկշռային տարրեր, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններ, մեծածախ ֆինանսավորման գործակից, պահառության վերցված ակտիվներ (ավանդներ), վճարումներ վճարահաշվարկային համակարգերի միջոցով, պարտատոմսերի և կապիտալի գործիքների շուկայում տեղաբաշխման գործարքների ծավալ, արտաբորոսայական ածանցյալների անվանական գումար, 3-րդ մակարդակի ակտիվներ, վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակով պահվող ակտիվների արժեք:

նկատմամբ բոլոր պարտավորությունները՝ միևնույն բանկային խմբի տարբեր երկրներում գրանցված մասնաճյուղերի փոխադարձ ակտիվների տարբերության չափով:

ՀՀ բանկերը արտասահմանում գրանցված մասնաճյուղեր դեռևս չունեն, ուստի օտարերկրյա պահանջների և պարտավորությունների ցուցանիշը ոչ ռեզիդենտներին տրամադրված և նրանցից ներգրավված միջոցների մեծությունն է:

2. Համախառն ակտիվների ցուցանիշն արտահայտում է առևտրային բանկի մեծությունը բանկային համակարգում, քանի որ խոշոր բանկի սնանկացումը որոշակի ժամանակ է պահանջում համակարգի մյուս մասնակիցներից, որպեսզի վերջիններս կարողանան իրենց վրա վերցնել սնանկացած բանկի գործառնությունները, ուստի որքան մեծ են բանկի ակտիվները (բանկային համակարգի ակտիվներում տեսակարար կշիռը), այնքան բանկն ավելի մեծ համակարգային նշանակություն ունի: Ցուցանիշը հաշվարկվում է բանկի և ընդհանուր բանկային համակարգի տեղաբաշխումների հարաբերությամբ:

3. Բանկային համակարգի փոխկապվածությունը գնահատվում է ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներով, պարտավորություններով, ինչպես նաև մեծածախ ֆինանսավորման գործակիցով: Բանկը որքան ֆինանսական համակարգից ներգրավված և տեղաբաշխված շատ միջոցներ ունի, ինչպես նաև որքան մեծ չափով է ակտիվային գործունեությունը ֆինանսավորում ֆինանսական համակարգի այլ մասնակիցներից ներգրավված միջոցներով, այնքան մեծ է նրա նշանակությունը, և իրացվելիության խնդիրների դեպքում այնքան մեծ կլինեն այլ բանկերի կորուստները:

ՀՀ բանկային համակարգում արժեթղթերով ներգրավված և տեղաբաշխված վարկերը տարածում չունեն, ուստի ՀՀ բանկային համակարգի տնտեսական կարգավորման տեսանկյունից էական չեն, իսկ բանկերի հետ կնքած արտաբորսայական ածանցյալների մասով ՀՀ առևտրային բանկերը տեղեկություններ չեն հրապարակում:

Հաջորդ ցուցանիշը, որով գնահատվում է համակարգային նշանակությունը, *մեծածախ ֆինանսավորման գործակիցն է*, որը մատնանշում է, թե բանկը որքանով է ֆինանսավորում իր գործունեությունը այլ ֆինանսական հաստատություններից ներգրավված միջոցներով: Ղա ուղղակի համեմատական է բանկի համակարգային նշանակությանը: Մեծածախ ֆինանսավորման գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Մեծածախ ֆինանս.գործակից} = \frac{\text{Հնդհանուր պարտ.} - \text{Մանրածախ ֆինանսավորում}}{\text{Հնդհանուր պարտ.}}$$

Ղեկղզիտային միջոցների ներգրավումն ընդունված է համարել մանրածախ ֆինանսավորում:

4. Համակարգային նշանակության գնահատման համար էական է նաև բանկային ծառայությունների շուկայում տվյալ բանկի զբաղեցրած դիրքը՝ որպես շուկայի մասնակից և հաճախորդներին սպասարկող տնտեսավարող սուբյեկտ: Մասնագիտացվածության բարձր մակարդակին և մատուցվող բանկային ծառայությունների լայն շրջանակին համապատասխանում է առևտրային բանկի մեծ համակարգային նշանակություն, ուստի մեծանում է բանկի սնանկացման հետևանքով տվյալ ծառայությունների շուկայում առա-

ջացող բացը, և, համապատասխանաբար, երկարում է այն ժամանակը, որի ընթացքում բանկային ծառայությունների շուկայի մյուս մասնակիցները կկարողանան փոխարինել սնանկացած բանկին: Բացի այդ, նոր բանկերի՝ տվյալ ծառայությունների շուկա մուտք գործելը կամ մատուցվող ծառայությունների քանակի մեծացումը առաջացնում է լրացուցիչ ծախսեր հաճախորդների համար: Բազելյան կոմիտեն բանկային ծառայությունների շուկայում առևտրային բանկի զբաղեցրած դիրքի գնահատման 3 ցուցանիշ է առաջարկում⁵.

- պահառության վերցված ակտիվների մեծությունը,
- վճարային համակարգերով կատարված վճարումների մեծությունները,
- բաժանորդագրային գործառնությունների ծավալը կապիտալի և պարտքի շուկաներում:

Առաջին ցուցանիշը հաշվարկվում է որպես պահառու բանկի տիրապետած ակտիվների արժեքի և բոլոր բանկերի նույն ցուցանիշի հանրագումարի հարաբերություն: Պահառության վերցված ակտիվների արժեքը ՀՀ բանկային համակարգում հաշվառվում է հետհաշվեկշռային հոդվածներում: Վերջիններս չեն արտացոլվում բանկերի հրապարակվող հաշվետվություններում, ուստի պահառության վերցված ակտիվների գումարները համակարգային նշանակության վերլուծության համար չեն դիտարկվել:

Վճարահաշվարկային համակարգում մասնագիտացված բանկը իրացվելիության կարևոր մատակարար կարող է դառնալ բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտների համար: Քանի որ վճարային համակարգով փոխանցված կամ ստացված գումարների մեծությունը բանկերը չեն հրապարակում, ուստի օգտագործվել է վճարային համակարգերի քանակը, որոնց անդամ է համարվում բանկը, ինչը հարաբերականորեն արտահայտում է փոխանցումների համակարգերում բանկի ակտիվությունը: Որքան շատ վճարային համակարգերի անդամ է բանկը, այնքան ավելի մեծ է վերջինիս համակարգային նշանակությունը:

Ակտիվ բաժանորդագրային գործունեությունը նույնպես բանկի համար համակարգային նշանակության հայտանիշ է համարվում, քանի որ վերջինիս սնանկացման դեպքում արժեթղթեր թողարկողները ստիպված լրացուցիչ ծախսեր են կրում արժեթղթերի թողարկման համար:

Անհրաժեշտ է առանձին անդրադառնալ նաև ՀՀ-ում բանկային ծառայությունների հասանելիության խնդրին: Ի տարբերություն զարգացած բանկային համակարգ ունեցող երկրների, որտեղ բանկային ծառայությունները հասանելի են նաև հեռահաղորդակցության՝ մասնավորապես համացանցի միջոցով, և բանկային ծառայությունների զգալի մասը հասանելի է նաև *ինտերնետ-բանկինգի* միջոցով, ՀՀ-ում հաճախորդների սպասարկումը հիմնականում տեղի է ունենում բանկ այցելության միջոցով: Նպատակ չդնելով վերլուծելու խնդրի պատճառները՝ հարկ է նշել, որ բանկային ծառայությունների հասանելիության առումով վճռական է մասնաձյուղային ցանցի տարածվածությունը, ուստի համակարգային նշանակության վերլուծության համար պետք է հաշվի առնել տվյալ բանկի մասնաձյուղերի քանակը: Ցուցանիշը հաշվարկվում է բանկի մասնաձյուղերի և ընդհանուր բանկային համակարգի մասնաձյուղերի քանակների հարաբերությամբ:

⁵ Տե՛ս „Global systemically important banks: assessment methodology and the additional loss absorbency requirement“ rules text, 2011 թ. նոյեմբեր:

5. Գուցանիշների հաջորդ խումբն արտահայտում է բանկային գործունեության կարգավորման բարդությունը: Այս խումբը կարևոր է այնքանով, որ դրա կազմի մեջ մտնող ցուցանիշները թեև ուղղակիորեն չեն արտացոլվում բանկի հաշվեկշռում, այնուամենայնիվ, արտահայտում են պայմանական պարտավորությունների մակարդակը և սնանկացած ֆինանսական ինստիտուտից իրացվելիության ռիսկի տեղափոխման աղբյուր են համարվում բանկային համակարգի այլ մասնակիցների համար⁶:

Վերլուծության համար ընտրվել են համապատասխան տարում առևտրային բանկերի կնքած արտաբորսայական ածանցյալների, առևտրային նպատակով պահվող ակտիվների մեծությունները, ինչպես նաև տրամադրված երաշխիքները, քանի որ բանկի սնանկացման դեպքում ֆինանսական շուկայի այլ մասնակիցներ բախվում են տեղաբաշխված միջոցների ապահովվածության հետ կապված խնդիրների, դրա հետևանքով էլ տեղի է ունենում փաթեթի (պորտֆելի) որակի վատացում: 3-րդ մակարդակի ակտիվների վերաբերյալ ևս ՀՀ բանկերը տեղեկություններ չեն հրապարակում, ուստի վերլուծության մեջ այս ցուցանիշը չի ներառվել⁷:

Ամփոփելով վերը նշվածը՝ ՀՀ բանկային համակարգի մասնակիցների համակարգային նշանակության հայտանիշի բացահայտման համար կարելի օգտագործել հետևյալ ցուցանիշների համակարգը:

Աղյուսակ 1

Համակարգային նշանակություն ունեցող ՀՀ բանկերի գնահատման ցուցանիշները

Ցուցանիշների խումբ	Խմբի կշիռ	Ցուցանիշ	Ցուցանիշի կշիռ
Օտարերկրյա գործունեություն	20%	Օտարերկրյա պահանջներ	10%
		Օտարերկրյա պարտավորություններ	10%
Մեծություն	20%	Ընդամենը ակտիվներ և հետհաշվեկշռային տարրեր	20%
Փոխկապվածություն	20%	Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	6.67%
		Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններ	6.67%
		Մեծածախ ֆինանսավորման գործակից	6.67%
		Մասնաճյուղերի քանակ	6.67%
Փոխարինելիություն/ ֆինանսական ինստիտուտների ենթակառուցվածք	20%	Վճարահաշվարկային համակարգերին անդամակցության աստիճան	6.67%
		Պարտատոմսերի և կապիտալի գործիքների շուկայում տեղաբաշխման գործարքների ծավալ	6.67%
		Արտաբորսայական ածանցյալների անվանական գումար	6.67%
Բարդություն	20%	Տրամադրված երաշխիքներ	6.67%
		Վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակով պահվող ակտիվների արժեք	6.67%

⁶ Այս խմբի մեջ մտնող ցուցանիշներից արտաբորսայական ածանցյալները և տրամադրված երաշխիքների գումարները, համաձայն հաշվապահական հաշվառման ստանդարտների, արտացոլվում են բանկի հետհաշվեկշռային հոդվածներում, և եկամուտ կամ ծախս են ճանաչվում դրանց գծով օգուտները կամ վնասները:

⁷ Այն ակտիվներն են, որոնց իրական արժեքը հնարավոր է որոշել՝ օգտագործելով միայն գնահատումները և ռիսկով ճշգրտված արժեքների միջակայքը: Տե՛ս http://www.investopedia.com/terms/l/level3_assets.asp

Համակարգային նշանակության գնահատման գործոնների խմբերը, ըստ բազելյան չափանիշների, ունեն հավասար կշիռ: Նույն սկզբունքն առկա է նաև յուրաքանչյուր խմբի մեջ մտնող առանձին ցուցանիշների դեպքում: Ցուցանիշներից յուրաքանչյուրի գծով նախ հաշվարկվում է առանձին բանկի տեսակարար կշիռը ողջ բանկային համակարգում, առավելագույն կշիռ ունեցող ֆինանսական ինստիտուտի կամ ինստիտուտների ցուցանիշը համարվում է տվյալ ցուցանիշի գծով առավելագույն սահմանային մեծություն, ստանում է 100% կշիռ, իսկ մնացած բանկերի ցուցանիշները՝ իրենց համապատասխան տոկոսային մեծությունը: Ցուրաքանչյուր ցուցանիշ կշռվում է աղյուսակ 1-ում նշված համապատասխան կշռով, և հանրագումարային տվյալն արտահայտում է բանկի համակարգային նշանակությունը: Ըստ այդմ՝ բանկերը բաժանվում են 4 խմբի՝ կապիտալի համարժեքության նորմատիվի տարբեր արժեքներին համապատասխան, ևս մեկ խումբ նախատեսված է ամենախիստ նորմատիվային արժեքի համար, որում, ըստ Բազելյան կոմիտեի մեթոդաբանության, ոչ մի բանկ չպիտի ընդգրկված լինի: Սա արված է այն նկատառումով, որ բանկերը խուսափեն համակարգային նշանակության կարգավիճակից և չգնան ռիսկային գործարքների մեծացման միջոցով լինի ավելի խիստ նորմատիվ, որը կկասեցնի բանկերի ռիսկային գործարքների աճը:

Աղյուսակ 2

Կորուստների վերացման անհրաժեշտ լրացուցիչ կապիտալը համակարգային նշանակության բանկերի համար

<i>խմբեր</i>	<i>Կապիտալի համարժեքության նորմատիվի լրացուցիչ արժեք</i>
5	3.5%
4	2.5%
3	2%
2	1.5%
1	1%

Աղյուսակից պարզ է դառնում, որ համակարգային նշանակության բանկերի համար կապիտալի համարժեքության նորմատիվի նվազագույն շեմը 1-2.5 տոկոսով ավելի բարձր է, քան այդպիսի կարգավիճակ չունեցող բանկերինը: ՀՀ բանկային համակարգին վերաբերող նմանատիպ վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Վերլուծության համար վերցվել են 2011 թվականի վերջի դրությամբ ՀՀ-ում գործող 21 առևտրային բանկերի տվյալները: Աղյուսակ 3-ում ներկայացված ցուցանիշները ամփոփվում են 5 խմբում՝ օտարերկրյա գործունեություն (2 ցուցանիշ), մեծություն (1), փոխկապվածություն (3), փոխարինելիություն (3) և բարդություն (3): 21 բանկերից յուրաքանչյուրի ցուցանիշի առավելագույն արժեքն ընդունվել է 100 տոկոս, իսկ մնացած բանկերի համար այդ ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\text{ցուցանիշ}_i = \frac{\text{բանկ}_i}{\text{բանկ}_{\max}} \times 100\%, \quad i = 1, 2, \dots, 21:$$

Աղյուսակ 3

ՀՀ համակարգային նշանակության բանկերի վերլուծություն՝ ըստ կապիտալի համարժեքության նորմատիվի լրացուցիչ մեծության խմբերի*

Բանկեր	10.00 %	10.00 %	20.00 %	6.67 %	6.67 %	6.67 %	6.67 %	6.67 %	6.67 %	6.67 %	6.67 %	6.67 %	100 %	
	Օտարերկրյա պահանջներ	Օտարերկրյա պարտավորություններ	Ակտիվներ	Ֆ-4-ների նկատմամբ պահանջ	Ֆ-4-ների նկատմամբ պարտավորություններ	Մեծ. ֆինանս. գործ.	Վճ. համակարգեր	Մասնաձյուղերի բանակ	Պարտատ. և կապ. գործ. շուկ. տեղաբաշխ. ծավալ	Արտաբյուրացական անճանջյալներ	Տրամադրված երաշխիքներ	Առ. և վաճ. համար պահվ. արժեքներ	Ընդամենը	Խումբ
Հայրիզնես-բանկ	100.00	25.18	77.07	23.36	27.26	44.67	76.92	44.12	0.00	0.00	100.00	24.66	45.27	2
Անելիքբանկ	0.28	9.55	33.60	16.80	9.55	50.65	46.15	20.59	0.00	0.00	0.72	0.32	15.68	0
Արարատ-բանկ	0.05	5.00	40.12	81.47	5.00	76.37	84.62	52.94	22.68	0.00	7.66	32.94	34.07	1
Ամերիա-բանկ	51.79	45.48	92.12	100.00	45.48	50.99	30.77	11.76	0.00	69.09	37.74	47.63	48.57	2
ՎՏԲ-Հայաստան բանկ	10.52	100.00	83.51	61.41	100.00	56.61	76.92	100.00	0.00	0.02	12.45	44.66	53.84	2
Հայէկոնոմ-բանկ	0.03	6.51	27.60	29.25	6.51	44.34	53.85	57.35	41.50	0.00	1.96	10.72	23.30	1
Պթոմբեյ բանկ	0.00	0.60	18.91	4.63	0.73	56.61	23.08	8.82	0.00	0.00	3.70	15.62	11.06	0
ԲՏԱ բանկ	0.05	1.83	4.30	2.30	1.91	53.44	53.85	7.35	0.00	0.00	0.01	6.10	10.93	0
Զարգացման հայկական բանկ	5.91	8.24	16.51	12.30	8.24	28.29	38.46	7.35	39.51	2.72	1.84	5.33	14.56	0
Կոնվերս բանկ	3.93	8.26	66.05	42.53	18.40	24.90	76.92	39.71	100.00	0.00	28.24	17.11	35.50	1
Ինելիքբանկ	0.14	43.77	40.61	36.24	43.77	71.24	61.54	20.59	0.00	0.20	17.90	14.43	29.20	1
Մելլաթ բանկ	24.94	13.17	12.06	2.15	44.11	100.00	15.38	0.00	0.00	0.00	0.20	0.07	17.67	0
Բիբլոս բանկ	0.02	16.79	17.30	46.03	16.79	52.01	23.08	4.41	0.00	0.00	0.71	7.35	15.37	0
Էյչ-Էս-Բի-Սի բանկ	7.91	22.20	79.48	65.19	22.20	20.83	23.08	8.82	0.00	65.63	25.02	100.00	36.70	1
Ակբա Կրեդիտ-Ագրիկոլ բանկ	0.07	97.25	100.00	85.30	97.25	76.76	100.00	61.76	0.00	100.00	23.32	15.71	63.12	3
Արցախ-բանկ	0.04	22.08	30.90	4.26	23.41	51.26	69.23	26.47	0.00	0.00	5.81	0.85	19.53	0
Առէկսիմ-բանկ -Գազպրոմբանկի խումբ	0.86	73.75	43.85	22.96	73.75	66.14	61.54	22.06	0.00	0.00	13.08	0.01	31.50	1
Յունիբանկ	2.94	3.37	53.03	9.02	12.68	27.83	30.77	51.47	0.00	0.00	6.54	14.69	17.70	0
Արոշինին-վեստբանկ	6.80	25.34	73.90	15.89	31.74	33.70	46.15	80.88	0.00	0.00	23.31	47.07	32.07	1
Արմավիս-բանկ	2.25	7.18	22.10	11.86	27.02	70.57	7.69	0.00	25.41	0.00	7.21	58.47	19.98	0
Պրոկրեդիտ բանկ	0.01	13.68	13.84	4.04	14.87	75.35	15.38	16.18	0.00	0.00	3.37	0.00	13.06	0

Այնուհետև տվյալ ցուցանիշի արժեքը կշռվել է համապատասխան կշռով և գումարվել մնացած ցուցանիշների կշիռներին: «Ընդամենը» սյունը ներառում է տվյալ բանկի 12 ցուցանիշների արժեքները տոկոսային արտահայ-

* Վերլուծության տվյալների համար օգտագործվել են բանկերի հրապարակվող հաշվետվությունները և կայքերը:

տությամբ՝ 1200 (12x100%) տոկոսի նկատմամբ: Ըստ նշված ցուցանիշի արժեքների՝ բանկերը բաժանվել են 5 խմբի՝ 80% և ավելի, 60-80%, 40-60%, 20-40% և մինչև 20%, իսկ յուրաքանչյուր խմբի համար սահմանվել է կապիտալի համարժեքության լրացուցիչ մեծություն. համապատասխանաբար՝ 2.5%, 2.0%, 1.5%, 1.0% և 0%: Վերջին խմբում ներառված բանկը չունի համակարգային նշանակություն, հետևաբար՝ համարժեքության նորմատիվի լրացուցիչ մեծություն չի սահմանվում:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, մեկ բանկ պետք է ընդգրկվի 3-րդ խմբում, 3 բանկ՝ 2-րդ խմբում, 7 բանկ՝ առաջինում: Մնացած 10 բանկի համար համարժեքության նորմատիվի լրացուցիչ մեծություն սահմանելու կարիք չկա: Հաշվի առնելով, որ կապիտալի համարժեքության նորմատիվը այժմ կազմում է ռիսկով կշռված ակտիվների 12%-ը, երրորդ խմբում ներառված բանկի համար պետք է սահմանել 14% համարժեքության նորմատիվ, երկրորդում՝ ներառված 3 բանկի համար՝ 13.5% և առաջին խմբի 7 բանկի համար՝ 13%:

Համակարգային նշանակության բանկերի համար սահմանվում են համարժեքության նորմատիվի լրացուցիչ՝ ավելի խիստ արժեքներ՝ ինչպես վերջիններիս սնանկացման հավանականությունը նվազեցնելու, այնպես էլ բանկի անվճարունակության դեպքում ֆինանսական և իրական հատվածներում խոշորածավալ վնասները վերացնելու նպատակով: Դա հաշվի առնելով՝ Բազելյան կոմիտեն համարժեքության նորմատիվի լրացուցիչ մեծությունը սահմանել է՝ հիմք ընդունելով այն սկզբունքը, որ խոշոր, համակարգային բանկի սնանկացման հավանականության և վնասների արտադրյալը պետք է հավասար լինի այլ՝ ոչ համակարգային նշանակությամբ բանկի սնանկացման հավանականության և հնարավոր վնասների մեծության արտադրյալին. քանի որ համակարգային նշանակության բանկի սնանկացման հետևանքներն ավելի մեծ են, ուստի վերջինիս սնանկացման հավանականությունը պետք է ավելի փոքր լինի:

Այնուամենայնիվ, ՀՀ բանկային համակարգում անհրաժեշտ է կատարել առանձին հաշվարկներ՝ օգտագործելով մեր երկրի բանկերի սնանկացման հավանականությունը, որպեսզի սահմանվեն նաև այս համակարգի համարժեքության նորմատիվի լրացուցիչ մեծությունները:

ՀՀ բանկային համակարգի համարժեքության նորմատիվի փաստացի մեծությունները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, ՀՀ բանկերը 2011 թվականի վերջի դրությամբ ունեն կապիտալի համարժեքության բավական մեծ պաշար. բանկային ամբողջ համակարգի կապիտալի համարժեքությունը կազմում է 16.8%՝ նորմատիվային 12%-ի դեպքում, իսկ առանձին բանկերի դեպքում այս ցուցանիշը հասնում է 50-100%-ի:

2011 թվականի տվյալները հաշվի առնելով՝ համակարգային նշանակության նորմատիվի կիրառման հետևանքով որոշ բանկերի համար հնարավոր է ենթադրել համարժեքության նորմատիվի խստացում, սակայն հիմնականում լրացուցիչ կապիտալի ներգրավման կարիք չի լինի՝ բացառությամբ «ՎՏԲ-բանկ Հայաստանի»: Վերջինիս պարագայում նորմատիվը կխստանա 1.5 տոկոսային կետով՝ կազմելով 13.5%, իսկ 2011 թվականի վերջին փաստացի համարժեքությունը կազմել է 13.22%: Սա նշանակում է՝ եթե նշված փոփոխությունները կատարվեին 2011-ին, ապա բանկը ստիպ-

ված կլինեն ավելացնելու իր կապիտալը ռիսկով կշռված ակտիվների 0.28%-ով, այսինքն՝ 500 մլն դրամով կամ հարաբերականորեն՝ 2.11%-ով: Փաստորեն, ՀՀ բանկային համակարգը, ընդհանուր առմամբ, պատրաստ է համակարգային նշանակության նորմատիվների կիրառմանը:

Աղյուսակ 4

Համակարգային նշանակության բանկերի համարժեքության նորմատիվի լրացուցիչ արժեքների և փաստացի մեծության համեմատություն 2011 թ. դեկտ. 31-ի դրությամբ

Բանկեր	Ն1 փաստացի 31.12.11 թ.	Գործող Ն1 նորմատիվ	Խստացված Ն1 նորմատիվ	Ն1 փաստացի - Ն1 խստացված
Հայֆինանսբանկ	13.83	12	13.5	0.33
Անելիքբանկ	21.54	12	12	9.54
Արարատբանկ	21.01	12	13	8.01
Ամերիաբանկ	14.98	12	13.5	1.48
ՎՏԲ-Հայաստան բանկ	13.22	12	13.5	-0.28
Հայէկոնոմբանկ	15.5	12	13	2.5
Պթմեթբանկ	53.17	12	12	41.17
ԲՏԱ բանկ	75.9	12	12	63.9
Զարգացման հայկական բանկ	17.64	12	12	5.64
Կոնվերս բանկ	13.38	12	13	0.38
Ինեկոբանկ	13.82	12	13	0.82
Մելլաթ բանկ	113.69	12	12	101.69
Բիբլոս բանկ	24.85	12	12	12.85
Էյչ-Էս-Բի-Սի բանկ	14.92	12	13	1.92
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	16.67	12	14	2.67
Արցախբանկ	19.02	12	12	7.02
Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ	24.75	12	13	11.75
Յունիբանկ	14.46	12	12	2.46
Արդշինինվեստբանկ	23.17	12	13	10.17
Արմսվիսբանկ	23.85	12	12	11.85
Պրոկրեդիտ բանկ	17.15	12	12	5.15
Բանկային համակարգ	16.80	12	-	-

Նորմատիվների տարբերակված կիրառումը թեև անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում բանկերի համար, այնուամենայնիվ, կարևոր է այնքանով, որ նվազեցնում է ռիսկերը խոշոր, համակարգային բանկերում: Բացի այդ, բազելյան մեթոդաբանությամբ առավել խիստ նորմատիվներ են սահմանվում միայն համակարգային բանկերի համար, որոնք բանկային ծառայությունների շուկայում արդեն իսկ առաջատար դիրք ունեն, և տարբերակում է կատարվում՝ բանկի մեծությունից ելնելով: Այսպիսով՝ համարժեքության նորմատիվի փոփոխությունը չի վնասում մրցակցությանը, այլ ընդհակառակը՝ դա իր բնույթով կարելի է գնահատել որպես շուկայի կենտրոնացվածության նվազման ուղղված քայլ:

ЭДГАР ХАЧАТРЯН

Аспирант кафедры
„Банковского дела и страхования” АГЭУ

Проблемы экономического регулирования системно значимых банков.- В статье представлены современные тенденции регулирования системно значимых банков, которые имеют существенное влияние на финансовую систему. Публикация отражает методологию концепции Базель III в различении системно значимых банков, а также важность более строгого регулирования таких учреждений в зависимости от их важности. Также показаны последствия, которые будут иметь внедрение более жестких нормативов для банковской системы Армении.

EDGAR KHACHATRYAN

Post-graduate at the Chair of
„Banking and Insurance” at ASUE

Problems of Economic Regulation of Systemically Important Banks.- The article represents the modern trend of regulation of systemically important banks that have significant impact on the financial system. The publication reflects the methodology of Basel framework in distinguishing systemically important banks and the importance of more strict regulation of such institutions according to their importance. The consequences that may have the implementation of tougher normatives for Armenian banking system have been shown as well.